

Հայաստանն ունի սեփական վերականգնողական էներգիայի մեծ պաշարներ

19:23, 17 Հունիս, 2011

ԳՅՈւՄՐԻ, 17 ՀՈւՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի վերականգնողական էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամն այսօր Գյումրիում կազմակերպեց հանդիպում-քննարկում, որի ժամանակ Շիրակի մարզի համայնքների ղեկավարներին ներկայացվեցին վերականգնողական էներգիայի ձեռքբերումները եւ հեռանկարները:

Ներկայացնելով վերականգնողական էներգիայի հնարավորություններն օգտագործելու ու զարգացնելու անհրաժեշտությունը՝ հիմնադրամի փոխտնօրեն Հայկ Եսայանը նշեց, որ դրա կարիքը հատկապես կա հանրապետության մարզերում, որոնք հարուստ են վերականգնողական էներգիայի՝ հիդրոէներգիայի, հողմաէներգիայի, արեւային, կենսազանգվածի եւ երկրաջրային էներգիայի պաշարներով: Ընդհանուր առմամբ, Հայաստանն ունի սեփական վերականգնողական էներգիայի մեծ պաշարներ, որոնց օգտագործումը թույլ կտա ապագայում բավարարել հանրապետության էներգետիկայի պահանջարկի մինչեւ երեսուն տոկոսը:

2010 թվականին արդեն վերականգնողական էներգիայի աղբյուրների հիման վրա Հայաստանում արտադրվել է մոտ 310 ԳՎտժ էներգիա, 2015-ին այս ցուցանիշը կարող է հասնել մոտ 740 ԳՎտժ-ի, իսկ 2020-ին՝ մինչեւ 1500 ԳՎտժ-ի:

Քննարկան ընթացքում հիմնադրամի էներգախնայողության ծրագրի ղեկավար Տիգրան Սեկոյանը, ներկայացնելով հիմնադրամի ուսումնասիրությունները համայնքային շենքերում՝ հասարակական կառույցներ, դպրոցներ, մանկապարտեզներ, ջերմոցային տնտեսություններ, նշեց, որ որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր կարող է ծառայել էներգախնայողությունը:

Հիմնադրամը, որը գործում է 2006 թվականից, ՀՀ «էներգախնայողության եւ վերականգնվող էներգիայի մասին» օրենքի համաձայն, խթանում է Հայաստանում էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի ոլորտներում ներդրումների իրականացմանը:

Ինչպես «Արմենպրես»-ի թղթակցի հետ զրույցում նշեց Հ. Եսայանը, հիմնադրամի հիմնական նպատակն է վերականգնողական էներգիայի եւ էներգախնայողության ոլորտներում շուկայի ձեւավորումը, նոր տեխնոլոգիաների կիրառումը եւ միջազգային փորձի օգտագործումը ՀՀ-ում:

«Հիմնադրամն իրականացնում է մի շարք ծրագրեր՝ վերականգնող էներգիայի, էներգախնայողության եւ քաղաքային ջեռուցման: Քաղաքային ջեռուցման ծրագրի շրջանակներում Հայաստանում իրականացվել է անապահով ընտանքիների բնակարաններում գազիֆիկացում եւ վառարանների տեղադրում, քաղաքային դպրոցների ջերմամատակարարման վերականգնում: Այս տարիների ընթացքում իրականացվել է շուրջ 120 քաղաքային դպրոցի ջերմամատակարարման վերականգնում, որից 14-ում կազմակերպվել են էներգախնայողության

միջոցառումներ: Շիրակի մարզի կառուցվել է Ջրաձոր ՀԷԿ-ը, որի ֆինանսավորման երեսուն տոկոսը եւս իրականացրել է հիմնադրամը: Շիրակի մարզում առկա է նաեւ հողմաէներգետիկ լուրջ պոտենցիալ, որն արդեն ուսումնասիրվել է միջազգային մի քանի ծրագրերով: Այդ ուսումնասիրությունների համաձայն, Քարախաչի լեռնանցքում առկա է 250-300 ՄՎտ հզորության քամու ներուժ, որն իրացնելու արդեն գործնական քայլեր են արվում»,- նշեց Հ. Եսայանը:

Նշենք, որ նման հանդիպում-քննարկում արդեն տեղի է ունեցել նաեւ Արտաշատում: Համանման միջոցառումներ նախատեսված են նաեւ Գղարքունիքի, Կոտայքի, Լոռու եւ Տավուշի մարզերում: Հանրային իրազեկման այս ծրագիրն իրականացնում է «Աջակցություն բարեփոխումներին» հասարակական կազմակերպությունը: